կամ ինքնիշխան, գնաց դարձեալ Գէորգ, իսկ երկրորդ քննիչը թէև խոստացաւ պատիժ գործակալին, մանաւանդ եկեղեցական փոքր վասնելու համար, բայց գիտաւորութիւնը անկատար մնաց։ Այս արժանապատիւ քահանան անպատեհ հրապարակաւոր մի ասորեմանաւորի, որը երեք տարի զանգատներ ուղարկելով կոնսիստորը, հանգուցեալ Գարրիէլ արքեպիսկոպոսին և պատասխան անգամ չը ստանալով, վերջապէս դարձաւ իր խնդիրքով Լիմմածնին։ Մանաւայ ասելու, որ յիշեալ գործակալը տարվայ մէջ 6 ամիս անգամ տեղս չէ մնում իր ընկերին ասում է, թէ այս ինչ գիւղումը բան ունէ, բայց լսում են, որ նա կամ Թիֆլիս է կամ Գէորի իր բարեբար Գառնակերեանց վարդապետի մօտ։ Գէորս ժողովուրդը անգոհ մնելով իր յաջորդ Գառնակերեանցից, կանմնում է նրան շարաժիլ Գէորից։ Մի քանի որ առաջ տեսայ փողոցում գործակալին, մի Թուղթ ձեռին, որի վրա ստորագրել էր տալիս Գուչէթի ժողովրդեանը, թէ Գառնակերեանցը անենաարժանաւոր մարդ է։ և այդ Թուղթը պէտք է ուղարկվի Լիմմածնին։ Ահա տեսէք, թէ ինչ բաներ են լինում։ Գէորս ժողովուրդը լաւ ճանաչելով իր յաջորդին, չէ կամենում նրան պահել, իսկ Գուչէթի ժողովուրդը, որ նրա երեսն անգամ չէ տեսել, վկայում է, որ ամենաարժանաւոր մարդ է։ Ինչպէս ասեցի, ամեն տեղ հոգեորականներից անգոհ են։ ամեն տեղից աղաչում, պաղատում, խնդրում են հոգեւոր իշխանութիւնը, որ ժողովրդին ազատ վատ քահանաներից, բայց նա ուշադրութիւն չէ դարձնում։ Եւ մինչև երբ մենք պէտք է այսպիսի դրութեան մէջ մնանք։

***

ՆԱՄԱԿ ՈՒԶՈՒՆԼԱՐԻՑ

—

20 օգոստոսի

Թոդնում եմ չատ հարատաւորդների, այն է չրջակայ ազնուականների, կապալառուների, և խեղճ երկրագործի քրտինքով հաճոյքներ կատարող ազատների մասին գրել։ Ես վեր եմ առնում միայն մեր գիւղի տէր հայերին։ Գրանք էլ մի տեսակ մարդկային ձեռքի վատակը ծծող էակներ են, ի հարկէ մի քանի բացառութիւնով։ Կամենում եմ միայն ցոյց տալ ընթերցող հասարակութիւնը մեր տէր հայերից մէկի —գործակատար հօր—վարմունքը։ Բայց ցաւով պէտք է ասել, որ սատանները խրոդութիւններ են։ Տէր հայրը, իբրև գործակատար, սորբ է համարում ազատ երկրագործից բռնի միջոցով հոգեոր իշխանութեան համար մոդոված պատուոյ անուն ցոյներին թաղարը վեց բուրլով վաճառել և մատանում չորս բուրլի սառագրել տալ։ Նա սորբ է համարում Լիմմածնի առանց այն էլ թանգ նկեղեցական մատանները ոգտատ հասարակութեան վրա նշանակած գնից մի բան ավելով վաճառել։ Սորբ է համարում կանոնագրեալ չը հանները անկանոն չհամաձայնութեամբ լուծել։ Սորբ է համարում անէծքի պատանաքով քսան և հոգից աւել գիւղերի իւրաքանչիւր ծնող կողմից մի մի գրվանքայ իւղ ստանալ, միայն մի քանի պուդ իր մեծերին նուիրելով, գրանց այսպիսով բաւականացնելու։ Սորբ է համարում բոլոր պատների առթիւ ստացված ապատատատ անուն տուրքերի չատ անգամ կէսը կամ մի երրորդ մասը ազատատրոյ անուանով իր գրպանը դնել։ Ի հարկէ, դա մի մարպին կոմիսիոներութիւն է տէր հօր կողմից։ Բայց գէթ ներելի էր նորան, եթէ ազքատ լինէր։ Նա այդ (իր բառերով) «չնչալի վարձ կոչված գումարը մուրհակներով պարտք է տալիս երկրագործներին ամիսը տասը բուրլի քսան կոպէկ տոկոսով, վեց ամիսը մի անգամ մուրհակը փոխում է, տարկոսը մայր գումարին գցելով։ Չեմ պատկի ե-թէ ասեմ, որ նա հոգեորդի այրված ճակատի քրտինքի արդիւնքը տոկոսով իրան փոխ է տալիս և արձնում յետ պանանջում։ Կարը ուզած միջոցին, երբ պարտատերի պարտքը ուզում է, տէր հայրը նրան գանատրել է, տալիս և կամ փողի փոխարէն նորա եղն է խլում, որ այլ ետ նա միջոց չունենայ վար վարելու և ապրելու։

Ես զարմանում եմ, թէ ինչու մեր հոգ. իշխանութիւնը այսպիսիներին փոխանակ պատժելու, աւելի առաջ է քաշում, պաշտօններ է յանձնում։

Կամենալով խօսել մեր ուսումնարանի վերաբերութեամբ սարսափում եմ նկարագրել։ Վերջին երեք չորս տարիների օտար վարժապետների անպատուութիւնը, բոլորովին յուսահատեցրին և սատերին առանց այն էլ անեռաքեր ժողովրդի սիրած դէպի ուսումնարանը։ Նախանձ, տաելութիւն, վրէժխնդրութիւն, ժայրենութիւն սիրում են մեր մէջ։ Գիւղական կառավարութեան անդամը մեզանից են։ Մեր ուսումնարանը արդէն ոչնչանալու վրա է, բայց նրա մասին մտածող չը կայ։—Մեզ հարեւար են լաւ վարժապետներ բարի հոգեորականներ, մեզ հարեւար են քարոզիչներ, լաւ հովիւներ և վերջապէս հարեւար է գիւղի երկու հազարից աւել հայերի մէջ միաբանութիւն։

***

ՆԱՄԱԿ Վ.ԱԼԱՐՇԱՊԱՏԻՑ

—

4 օգոստոսի

Մի նամակ գրեցի և ուղարկեցի «Մեղու Հայաստանի» լրագրին, կարծելով որ ինչպէս չարունեալ աւետարանականների դէմ է գրում, նորանցից էլ պատասխան կընդունէ և կը տպէ, առանց ապատութեան, բայց նա հիմա, քսան և երեք որ է որ լռել է։

Ուստի, մեծապատիւ խմբագրապետ, խնդարկաբար խնդրում եմ ընդունել իմ նամակս և բարեհաճէք տպել ձեր թերթերից մէկի մէջ, իբրև պատասխան «Մեղուին»։

«Մեղու Հայաստանի» լրագրի թերթերը կարդալով չարունակ գտնում ենք այն միտքը, որը ցաւելով ասում ենք, մոլեռանդ լուսաւորչականներին և մանաւանդ հայ ազգի ստորին դասակարգը զրգռում և ոգք է հանում աւետարանականների թէև կրօնաբաժան, բայց հայ ազգի հարազատ զաւակների դէմ։ Ի հարկէ, յայտնի է, թէ ինչ կը լինի դրա հետեւանքը։ Լրագիրը անդադար կրկնում է, թէ իբր հայերի ոգէտ մասն է, որ ընդունում է աւետարանականութիւնը։ Բայց դա սխալ է։ Մեզ ոգէտ ճանաչելու համար ես կը պատասխանեմ այսպէս։ Եթէ բարեհաճէք, կը խնդրենք վեր առէք մի գիւղացի հայ աւետարանական։ և նոյն գիւղի լուսաւորչական քահանան, թող խօսեն միմեանց հետ թէ կրօնի, թէ արարքին խնդիրների վրա, օրինակ ազգութեան վրա, տեսնենք նորանց որն է առողջ դատողութեան տէր և օրինաւոր հասկացութիւն ունեցողը։ Բանը նա չէ, որ աւետարանականներն «ոգէտ» ասէք և անցնէք, խօսքը այն ժամանակ հատատատութիւն կունենայ, երբ օրինաւոր ապացոյցներով հաստատէք։ Կամ եթէ ասումէք պ. Ամիրխանեանցին և Ամիրխանեանցիներին, թէ սրտոգներ են, որոնք գրում են, պ ը օ ս ե ա տ ա ն ա ն են։ չենում մեր ազգի ոգէտ և ռամիկ մասին, նա էլ՝ դանագան խարդախ միջոցներով, ասինքն փողով, դա յայտնի զրպարտութիւն է։ Եթէ այդպէս վիներ, ազատ հարուստներից սկսած մինչև կոպէկի կարօտ ազքատները աւետարանական անուն կը կրէին հէնց թիֆլիսի մէջ էլ, և եթէ «Մեղուին» ասածը ստոյգ է, կը խնդրենք ապացուցանել, թէ որ սրտոգը եկաւ Ամիրխանեանց էր, թէ ուրիշներ. ամերիկայի, անգլիայի կամ գերմանայի միսիոնարներ եկան,—կը խնդրենք պատասխանել։

Այնի ասէք, այո, նորանք, մենք դարձեալ կը հարցնենք թէ էրբ կամ ովքեր եկան, կամ թէ որ նորանք մի տիպիսի գազանի միջոցով ներս մտան մեր մէջ և որսացին մեզ պաշտօնս, ապա ս. Լիմմածինը և վարդապետները ինչով էին ըստրաղված, որ չխնայեն որսորդների ներս մտնելը։ Մենք՝ վաղարշապատի աւետարանականներս մեծաւ ուրախութեամբ կընդունենք և կընդունենք, եթէ մէկ գիտնական կամ տպէտ վարդապետ գար և կամ այդ մեր ժողովարանը մեր որս եղածներս և մոլորվածներիս, ըստ «Մեղուի» կարծեաց, քարոզէր և համոզէր մեզ մոլորվածներիս, չէ որ իրանց աչքի առաջն ենք ամեն օր։ Բայց աւետարանականութիւնը սկսած է վաղարշապատում սրանից ե ր և ս ուն տարի առաջ, այն ժամանակ, երբ այդ որսորդ կարծվածները, այն է Ամիրխանեանցները մեր երկրում, գուցէ աւետարանական էլ չէին, և վաղարշապատի աւետարանականներին բոլորովին անծանօթ մինչև վերջին ժամանակներս։ Եւ եթէ ինձ հարցնէք՝ ապա որտեղից բուսաւ այդ կրօնքը, ես ձեզ կասեմ և կապացուցանեմ, որ Լիմմածնի մէջից և այն էլ հէնց հոգեորական դասից, որից լսս է սատցել մի մարդ, որը մինչև այսօր կենդանի է, և նորանից էլ ազգին յայտնի բանաստեղծ ազքազ Շ ի ր ի ն ը, որի բանաստեղծութիւններում փայլում է (ինչպէս տպված է «Նոր քնար Հայաստանի» տետրակների մէջ) նորա կրօնասիրական և ազգասիրական ոգին, և նա սրանից քսան և հինգ տարի առաջ քարոզ ձեռքին իր հանճարեղ բանաստեղծութիւնները երգում էր վաղարշապատում և նորա շրջակայքում։ Իսկ սրանից երկու տարի առաջ լսելով օտար երկրում վաղարշապատի աւետարանականներ համար մի տերիկացի միսիոնար մտար Քէօլը՝ Էրզրումից այցելութեան եկաւ վաղարշապատ, բնաւ մի անգամ էլ քարոզ չը խօսեց։ Ինչպէս եկաւ այնպէս էլ վերադարձաւ, իսկ պ. Ամիրխանեանցը բնաւ չէ տեսնված վաղարշապատում։ այդտեղի աւետարանականներն էլ բնաւ չեն տեսել նորա երեսը։

Դարձեալ դառնում եմ առաջի հարցիս, թէ որ այդ տեղերի աւետարանականութիւնը ընդունողներ ժողովրդի ոգէտ մասն են, կամ տգիտութիւնից է, որ աւետարանականութիւնը տարից տարի առաջ է գնում վաղարշապատում և նորա մերձակայ գիւղերում, ինչպէս Սամաղրում, որտեղ երեսուն տուն աւետարանական կայ և գրեթէ նոյնչափ էլ վաղարշապատի մէջ կայ։ և այդտեղերում մի տատ էլ աւետարանական քարոզիչ չը կայ, ապա ինչու համար ս. Լիմմածնի գիտնական վարդապետները մէկ անգամ չը համարձակվեցան գնալ այդ տգէտների մօտ և նորանց համոզելով վերադարձնել լուսաւորչական եկեղեցին։ ուրեմն կը խնդրենք մէկ անգամ արէք այդ փորձը և մենք այն ժամանակ գուցէ կընդունէինք և կը վերադառնայինք մեր հին եկեղեցու գիրկը։

Սակայն պէտք է բացարձակապէս ասեմ, որ քրիստոնէութիւնը ըստ աւետարանին հասկանալու համար մեծ համարարական գիտութիւն էլ պէտք չէ, այլ միայն բարեպաշտութիւն, ինչպէս տեսնում ենք ս. աւետարանի մէջ, որ փրկիչը իրան առաքեալները ընտրեց հասարակ մարդիկներից, ձկնորսներից և մաքսատան ծառայողներից, դրամատգրներից և այլն, և տես այդ մարդիկներն էին, որ քրիստոնէութիւն տարածեցին հասկատարած արքարէի երեսին։ Եւ սա էլ ասում եմ և հաստատել էլ կարող եմ, որ չատ անգամ հարատնվիներում, մկրտութեան, խնդրվանքներում կամ ոգի անելում հացկերոյթի ժամանակ, ուր սովորաբար գտնվում են բանանոյք, Հայաստանի ամեն կողմերում, եթէ նոյն խնդրվանքներում գտնվում են աւետարանականներ, ես ձեզ հաստատացնում եմ, որ մի խօսք էլ կասեն վիրարիներ չէ վստահանում քահանան խօսել, որովհետև կրօնագիտութեան մէջ իրան անհասկացողութիւնը նա չատ լաւ է ճանաչում։

Հայ-աւետարանական

ՆԱՄԱԿ ԹԻՐԱԳՐԻՑ

—

Շուշի, 20 օգոստոսի

Խնդրում եմ զուր տեղ ամբաստանված մի բանի անմեղ կրանանդերից ազատելու համար, մի անկիւն տարէք ձեր պատասխան լրագրի մէջ հետեւեալ յայտարարութեան։

Անվեհեր իմ «Լարարքի թեմ» և նորա կարուածական խնդիրը» վերնագրով յօդուածը պատճառ է եղել մի քանիների կողմից կասկածելու, թէ այդ յօդուածը գրված է պ. Ղ. Ազգայեանցի և պ. Ա. Ցոմհանեանցի (հոգեոր դպրոցի ուսուցիչների) յորդորքով և խնդրանքով, ուստի այդ անձերից անպատասխանելու հրատարակելու և նրանց զուր տեղ կասկածի չենթարկելու համար, հրապարակաւոր յայտնում եմ ի լուր Շուշու ընթերցող հասարակութեան, որ այդ յօդուածի սկզբնաւորութիւնը և հեղինակութիւնը ամբողջապէս և միայն իմն է պատկանում և ոչ թէ միայն մի յիշեալ անձինք, այլ և ոչ ոք չէ մասնակցել նորան։

Համբ. Ալաբերեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Օրիորդ Մարիամ Վարդանեան խնդրում է մեզ յայտնել, որ Աթբուռնու թատրանում օգոստոսի 20-ին եղած հայոց ներկայացումից գոյացաւ 400 բուրլ արդիւնք, որից 82 ր. 50 կ. ծախսը հանելով, մնում է զուտ արդիւնք 317 ր. 50 կ.։ Այդ փողը յանձնվեցաւ այն օրիորդին որ ուղևորվելու է Ս. Պետերբուրգ, բժշկական ուսումը շարունակելու համար։ Թատրոնը ձրի էր տրված, միայն գիշերվայ ծախս, մասնաւորապէս 20 բուրլ վերցվեցաւ։ Այդ քսան բուրլ պարունակվում է 82 ր. ընդհանուր ծախսի մէջ։

—

Լ.ԱՐԻՆՇԱԿՅԱՆ կայարանից, կուրանան նահանգից մեզ գրում են որ ամառս սկսեցին հանդանակութիւն հաւաքել յօգուտ Կ. Պոլսի «Միացեալ հայոց ընկերութեան»։

—

Մայրաքաղաքի լրագիրներում կարդում ենք, որ Ս. Պետերբուրգի գեղեցիկ-չարքի Ակադեմիայում այս տարվայ հարցաքննութիւնների ժամանակ ներկայացան 215 օթիցէրներ, որոնք ցանկութիւն են յայտնում ընդունված լինել Ակադեմիայի մէջ։ Ցանկացողների այդ տեսակ մեծ թիւ գեռ երբէք եղած չէ Ակադեմիայում նրա հիմնվելու օրից սկսած։

—

«Русскій Курьеръ» լրագրին գրում են Բիպան քաղաքից, որ Կասպեան բաղաքի ռուսական եկեղեցու ուսուցչանոց Գէլբով ներքակված և հոգեոր դատարանին, իր անբարոյականութեան, անվայել բարք ու վարքերի ու կոպիտ վարմունքի համար իր ծուխի հետ։ Դեռ անցեալ տարի կասպիովի բնակիչները, թւով 300 գրաւոր գանգատ էին տուել Գէլբովի դէմ։

—

«Кавказъ» լրագրին հեռագրում են Երեւանից, օգոստոսի 27-ից, որ չարչիների Ջորէով, որոնք մեծ քանակութեամբ ցորեն են առնում Երեւանեան նահանգի գիւղերում, ցորենի խալաքը 37 բուրլուց բարձրացաւ արդէն մինչև 67 բուրլ Զաւուշ գաւառ անհանգստութեան մէջ է։

—

Կ. Պոլսի ռուսաց գեսպանատունը հաղորդում է յուլիսի 29-ից, որ Թիւրքաց կառավարութիւնը արգելեց Դիարբէքիրի վիլայէթից օչխարների վաճառանանութիւնը, իսկ վանի վիլայէթից տաւարի վաճառանանութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ *)

—

ԱՐՔ Ա. ԳԻՆՆԻՈՒԹ. Պ. Ալէյան Պրոյի խոսանձներուն այժ տարու Համար խոսք տուաւ։ Ըսաւ թէ այս խնդիրը ժողովին ուշադրութեան ներկայացուն Հարկն երկար փաստարանութեան կարօտ չէ։ Կը կարծէմ իսկ (կրնէ Պ. Քէնեանէ.) թէ ազիսի բարեկամ Լրաւունք ունէր աւելի յատաջ երթալու և ժողովէս խնդրելու, որ Ամիներոյ թշուառութեանց Համար խորին կարկեցութիւն ցուցնելով, ներկայ խնդրոյն սահմանութիւնն յայտնել, և Ծանուցանել նան որ ինք (ժողովը) պատրաստ է այս մասին կատարեալ աջակցութիւն ընծայել պ. Կարտրեանի նախարարութեան։ Կրաւ է տարոյն որ մեծ անխնայեմութիւն կը լինի ժողովոյս առաջարկ մը ներկայել, որ Հայ ժողովրդեան արեան մէջ յոյսեր արթնցնել, բայց փաս կոդմէն չեմ կարծեր թէ ո և է պատնանկնայ այս խնդիրը մեկ կողմ թողլու։ Համար։ Պէտք է յիշենք թէ Երեւան և Համարոյն աշխարէն Անգղիոյ Արեւմխանաց ժողովին կը նային այս Նիւթիս վրա Անգղիոյ Հասարակաչին Կարծիքն իմանալու Համար, և բնականաբար ժողովոյս գործողութիւնները պիտի քննին Հասկնալու Համար թէ վերջին ընարութեանց վրայ Անգղիոյ խորհրդարան ամեն ջանք կրնէ Հայոց խնդրոյն զոհացուցիչ կերպով կարգադրման Համար։ Համարոնում Ծանուցագրին վերջին կոտրն, որ Հայոց կը վերաբերէր, մեր նախարարութեան այդ նեկամամբ ունեցած դիտաւորութիւնները լաւ կը բացատրէր, և ասոյգ է որ Արեւմխանաց ժողովս այս մասին յաջողութեամբ այժ պիտի ապ կառավարութեան։ Անգղիական յանդիմանութիւնք մինչև ցայգ խնամ քիչ բարիք արասարեցին։ Սրբ Հէնրի Լէյարդ Փոքր-Ասիոյ Անգղիական հիւպատոսն մանաւանդ յանձնարարեց յայտնում իրրև լաւագոյն միջոց Հարատաւորեալ ժողովրդոյ օգնելու։ Նաւ պարագայից մէջ քրիստոնեայք առաջնորդէն աւելի ոտրալի վիճակի մէջ են։ Բարեկարգական ձեռնարկք ապարդիւն մնացին։ Ինչպէս Հայք ես կրեան խոսմանանք՝ խոսքիւով կը սիրեն և խոսքերով կը վերջանան։ Կը փանեամ թէ վերջերս ծանուցուած բարենորոգութիւնքն ալ լաւագոյն արդիւնք չեմք կրնար սպասել։ Սրբ Հէնրի Լէյարդի խոսքերէն յայտնի է թէ բան մ՚ընելու է և մեկ խնդիրը կատարելու գործողութեան ձեռն վրա է։ Պատասարժան բարեկամ, ս. Պրայս, Լիբանանու երջանկի ժողովուրդներն յիշած էր, որք Դամասկոսի ջարդերուն վրա 1860-ին հաստատ

*) Շարունակութիւն տես «Մշակի» № 149